Համայնքային Դասընթացների և Զբաղմունքների Վերաբացման Արձանագրություն

Կասեցված է՝ այլևս ուժի մեջ չէ

COVID-19-ը շարունակում է վտանգ ներկայացնել համայնքների համար և բոլոր մարդկանցից պահանջում է հետևել նախազգուշական միջոցառումներին և ձևափոխել գործողությունները և զբաղմունքները՝ նվազեցնելու վարակի տարածման վտանգը: Սույն արձանագրությունը ուղղորդում է այն կազմակերպություններին, որոնք առաջարկում են դասեր և ցածր վտանգավորություն ունեցող գործողություններ երիտասարդների և մեծահասակների համար համայնքային վայրերում, ինչպիսիք են՝ համայնքային կենտրոնները, ծերանոցները և հանրային այգիների փակ և բացօթյա տարածքները: Այդպիսի գործողությունները կարող են ներառել՝ համայնքային երաժշտության և թատրոնի դասեր, մարմնամարզության (աթլետիկա) դասեր, արվեստի դասեր և ընթերցանության ակումբներ: Այն կարող է ներառել նաև համայնքային կարևոր ծառայություններ, ինչպիսիք են՝ աշխատանքի հարկային նախապատրաստմանը, համայնքային հանդիպումների և հովացման կենտրոնների համար տարածք տրամադրելը:

Վարակված անձի կողմից, անգամ, եթե նա իրեն լավ է զգում, COVID-19-ի այլ անձանց փոխանցելու վրա ազդում են հետևյալ գործոնները՝

- Վտանգը մեծանում է, երբ դիմակները պատշաճ կերպով և շարունակաբար չեն կիրառվում՝ ծածկելով քիթը և բերանը, ինչպես նաև, երբ չի պահպանվում ֆիզիկական հեռավորություն:
- Վտանգը մեծանում է, երբ գործողությունները կատարվում են փակ տարածքներում, մասնավորապես՝ վատ օդափոխվող վայրերում:
- Վտանգը մեծանում է մասնակիցների միջև շփման մակարդակի ավելացմանը զուգահեռ. ավելի սերտ շփումը (մասնավորապես դեմառդեմ շփումը), ինչպես նաև սերտ շփման հաճախականությունը և ընդհանուր տևողությունը մեծացնում են մասնակիցների միջև շնչառական մասնիկների փոխանցման վտանգը:
- Վտանգը մեծանում է ֆիզիկական ծանրաբեռնվածությանը զուգահեռ. Ավելի ծանր վարժությունը մեծացնում է շնչառության չափը և արագ շնչելուն զուգահեռ՝ ներշնչված և արտաշնչված օդի քանակը:
- Վտանգը մեծանում է խմբավորումների և խմբերի հետ միասին, մասնավորապես՝ տարբեր համայնքների և ընտանիքների անդամներից կազմված:

Համայնքային դասերը, որոնք առաջարկում են սպորտային կամ մարզական դասընթացներ, պետք է համապատասխանեն սույն փաստաթղթին՝ ի հավելումն Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության [Երիտասարդական և Մեծահասակների Մարզական Ժամանցային Մրցաշարերի Արձանագրությանը:]

Հաշվի առեք, որ այս փաստաթուղթը չի վերաբերում մասնավոր վայրերում առաջարկվող կամ անցկացվող դասընթացներին, ինչպիսիք են՝ արվեստի կամ երաժշտության մասնավոր դասերը կամ մասնավոր ուսուցչի հետ անցկացվող դասերը: Այդպիսի գործունեություն իրականացնողները պետք է հետևեն ԼԱ Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության [Սահմանափակ Ծառայությունների Արձանագրությանը]: Այն չի վերաբերում նաև Բարձրագույն Կրթություն Տրամադրող Հաստատությունների կողմից առաջարկվող դասընթացներին, որոնք պետք է հետևեն ԼԱ Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության [Բարձրագույն Կրթություն Տրամադրող Հաստատությունների Արձանագրությանը:]

- Խնդրում ենք նկատի ունենալ՝ սույն փաստաթուղթը կարող է թարմացվել լրացուցիչ տեղեկությունների, կամ ռեսուրսների հասանելի դառնալու դեպքում, ուստի կանոնավոր կերպով ստուգեք Լոս Անջելեսի Շրջանի վեբ կայքը՝ http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/ սույն փաստաթղթի ցանկացած թարմացմանը ծանոթանալու համար:

Հաջորդող արձանագրության շրջանակում, <<ամբողջովին պատվաստված անձ>> կամ <<ամբողջովին պատվաստում>> եզրույթը նշանակում է, որ անձը կարող է ներկայացնել պատվաստման քարտ, բժշկական էլեկտրոնային քարտ կամ այլ ապացույց, որ՝

- Անցել է երկու շաբաթ կամ ավել COVID-19-ի դեմ 2 դեղաչափից բաղկացած պատվաստանյութի (օր.՝ Pfizer-BioNTech կամ Moderna) երկրոդ դեղաչափը ստանալուց հետո, ԿԱՄ
- Անցել է երկու շաբաթ կամ ավել COVID-19-ի դեմ մեկ դեղաչափից բաղկացած (օր.՝ Johnson and Johnson (J&J/Janssen) պատվաստանյութով պատվաստվելուց հետո:

Սույն փաստաթուղթը ներառում է՝

(1) Աշխատավայրի գործունեության ծրագրեր ու գործելակերպ՝ ուղղված աշխատակիցների առողջության պաշտպանությանը
(2) Ֆիզիկական հեռավորության պահպանմանն ուղղված միջոցառումներ
(3) Վարակի վերահսկումն ապահովելու միջոցառումներ
(4) Հաղորդակցություն աշխատակիցների և հանրության հետ
(5) Կարևոր ծառայություններին անաչառ հասանելիություն ապահովող միջոցառումներ:

Վերաբացման ցանկացած արձանագրություն մշակելիս պետք է հաշվի առնել վերոնշյալ հինգ հիմնական ոլորտները:

Սույն արձանագրության մեջ ներառված բոլոր Համայնքային Դասընթացները և Զբաղմունքները պետք է իրականացնեն ամբողջ թվարկված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու չիրականացված որևէ միջոցառում կիրառելի չէ տվյալ Դասընթացի կամ Զբաղմունքի համար:

Համայնքային Դասընթացի Անվանումը՝ _____

Հաստատության Հասցեն՝ _____

A. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ ՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ (ՆՇԵԼ ՀԱՄՏԱՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈԼՈՐ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ)

- ❑ Բոլոր անձանց, որոնք կարող են կատարել իրենց աշխատանքային պարտականությունները տնից, պետք է հանձնարարել աշխատել տնից:
- ❑ Խոցելի անձնակազմին (65 տարեկանից բարձր և քրոնիկական առողջական խնդիրներ ունեցող անձինք) պետք է հանձնարարել այնպիսի աշխատանք, որը, հնարավորության դեպքում, կարելի է կատարել տնից, և նրանք պետք է քննարկեն ցանկացած մտահոգություն իրենց բուժօգնություն տրամադրողի կամ մասնագիտացված առողջապահական ծառայություններ տրամադրողի հետ՝ աշխատավայր վերադառնալու վերաբերյալ համապատասխան որոշումներ կայացնելու համար:
- ❑ Աշխատանքային գործընթացները պետք է հնարավորինս ձևափոխվեն՝ մեծացնելու աշխատակիցների տնից աշխատելու հնարավորությունը: Դիտարկեք աշխատանքային պարտականություններում փոփոխություն պահանջող աշխատողներին, դոցենտներին պրակտիկանտներին և կամավորներին աշխատանքային այնպիսի տարբերակների առաջարկումը, որոնք նվազեցնում են նրանց շփումը հաճախորդների և մյուս աշխատակցիների հետ (օր.՝ գանձապահ աշխատելու փոխարեն իրականացնել

Ստացված է՝ այլևս կիրառելի չէ

գույքագրման վերահսկում, կամ հեռահաղորդակցության միջոցով վարչական կարիքների կառավարումը):

- ❑ Անհրաժեշտ է կազմել ալընտրանքային, փոփոխվող կամ հերթափոխային ժամանակացույց՝ առավելագույնի հասցնելու ֆիզիկական հեռավորությունը:
- ❑ Բոլոր աշխատակիցներին (ներառյալ՝ վճարովի հիմունքներով աշխատող անձինք և կամավորները, միասին՝ <<աշխատակիցներ>>) պետք է կարգադրել չգալ աշխատանքի, եթե հիվանդ են կամ շփվել են COVID-19-ով վարակված անձի հետ: Հաջորդիվ տե՛ս մուտքի ստուգումների գործընթացը: Աշխատակիցները գիտակցում են ըստ անհրաժեշտության Հանրային Առողջապահության Վարչության ինքնամեկուսացման և կարանտին պահպանելու ցուցումներին հետևելը: Անհրաժեշտ է վերանայել և փոփոխել աշխատավայրում արձակուրդի քաղաքականությունը՝ ապահովելու, որպեսզի հիվանդության պատճառով տանը մնացող աշխատակիցները տույժերի չենթարկվեն:
- ❑ Խստորեն խորհուրդ է տրվում, որպեսզի անձնակազմի բոլոր անդամները և մասնակիցները ամբողջովին պատվաստված լինեն COVID-19-ի դեմ:
- ❑ Մուտքի ստուգումները պետք է իրականացվեն նախքան աշխատակիցների, կամավորների, վաճառողների, պայմանագրային աշխատողների, առաքման անձնակազմի և աջակցող մյուս անձնակազմի կողմից աշխատավայր մուտք գործելը՝ համաձայն LACDPH Մուտքի Ստուգումների Ուղեցույցի: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչառության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողի և համի կամ հոտի նոր առաջացած կորստի ստուգում, ինչպես նաև հարցում, թե արդյոք անձը տվյալ պահին գտնվում է մեկուսացման կամ կարանտինի հրահանգների ներքո: Նշված ստուգումները կարող են կատարվել հեռակա կարգով կամ աշխատավայրում անձնապես՝ աշխատակիցների ժամանման պահին: Հնարավորության դեպքում պետք է կատարվի ջերմաչափում:
  - Ստուգման Բացասական Արդյունք (Մուտքը Թույլատրվում է). Եթե անձը չունի ախտանիշ(ներ) և վերջին 10 օրերի ընթացքում շփում չի ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ, նա կարող է այդ օրը մուտք գործել աշխատավայր:
  - Ստուգման Դրական Արդյունք (Մուտքը Չի Թույլատրվում).
    - Եթե անձն ամբողջովին պատվաստված չէ COVID-19-ի դեմ[1] և վերջին 10 օրերի ընթացքում շփում է ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ կամ տվյալ պահին գտնվում է կարանտին պահպանելու հրահանգների ներքո, նա չի կարող մուտք գործել և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ տանը կարանտին պահպանելու: Տրամադրեք նրան կարանտին պահպանելու հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ ph.lacounty.gov/covidquarantine:
    - Եթե անձի մոտ դրսևորվում է վերոնշյալ ախտանիշներից որևէ մեկը, կամ նա տվյալ պահին գտնվում է մեկուսացման հրահանգների ներքո, նա չի կարող մուտք գործել և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ մեկուսանալու տանը: Տրամադրեք նրան մեկուսացման հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ ph.lacounty.gov/covidisolation:
- ❑ Տեղեկանալով, որ մեկ կամ մի քանի աշխատակիցների թեստի պատասխանը դրական է, գործատուն պետք է պահում ունենա ծրագիր կամ արձանագրություն, որպեսզի այդ վարակված անձը (անձինք) մեկուսանա(ն) տանը, և աշխատավայրում վարակված անձի (անձանց) հետ շփում ունեցած բոլոր աշխատակիցներից պահանջի անհապաղ ինքնակարանտին պահպանել: Գործատուի ծրագիրը պետք է նախատեսի արձանագրություն կարանտինի մեջ գտնվող բոլոր աշխատակիցների համար, որը կապահովի հասանելիություն COVID-19-ի համար թեստ հանձնելուն՝ որոշելու, թե արդյոք աշխատավայրում տեղի են ունեցել վարակման լրացուցիչ դեպքեր, ինչը կարող է պահանջել COVID-19-ի վերահսկմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների իրականացում:
- ❑ Համայնքային դասընթացների կամ զբաղմունքների կազմակերպիչները պետք է Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությանը տեղեկացնեն հաստատված COVID-19-ով վարակված բոլոր անձանց

Վաղեցած է անվավեր տարեթիվ

[1]Մարդիկ համարվում են COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված, 2 դեղաչափից բաղկացած պատվաստանյութի (օր՝ Pfizer-BioNTech կամ Moderna) 2-րդ դեղաչափը ստանալուց 2 (երկու) շաբաթ կամ ավել ժամանակ անց, կամ մեկ դեղաչափից բաղկացած պատվաստանյութով (օր.՝

Johnson and Johnson [J&J]/Janssen) պատվաստվելուց 2 (երկու) շաբաթ կամ ավել ժամանակ անց:

մասին, որոնք գտնվել են հաստատության ցանկացած տարածքում հիվանդությանը նախորդող 14 օրերի ընթացքում: Հիվանդության սկիզբ է համարվում COVID-19-ի ախտանիշների դրսևորման կամ COVID-19-ի թեստ հանձնելու օրը՝ որը որ ավելի շուտ է եղել:

- ❑ Հաստատության տարածքում վարակված անձանց մասին Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությանը հաղորդելու նախընտրելի տարբերակը Առցանց Հաղորդումն է, որը կարելի է կատարել համակարգչի կամ հեռախոսի միջոցով, որոնք հասանելիություն ունեն անվտանգ վեբ հավելվածին՝ http://www.redcap.link/lacdph.educationsector.covidreport. Եթե առցանց հաղորդել հնարավոր չէ, ապա հաղորդել հնարավոր է ինքնուրույն՝ ներբեռնելով և լրացնելով COVID-19-ով Վարակված Անձանց և Նրանց Կոնտակտավորների Ցանկը Կրթական Ոլորտի համար, և այն ուղարկելով հետևյալ հասցեին՝ ACDC-Education@ph.lacounty.gov: Վարակման դեպքերի մասին բոլոր հաղորդումները պետք է ներկայացնել դեպքի մասին տեղեկանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:
- ❑ Հաստատության տարածքում 14-օրյա ժամանակահատվածում վարակման 3 կամ ավելի դեպքերի հայտնաբերման դեպքում, համայնքային դասընթացի կամ զբաղմունքի կազմակերպիչը պետք է անմիջապես հաղորդի վարակման տվյալ խմբակային դեպքի մասին Հանրային Առողջապահության Վարչությանը՝ հաղորդման վերոնշյալ տարբերակով: Հանրային Առողջապահության Վարչությունը կհամագործակցի համայնքային ծրագրի հետ՝ որոշելու, թե արդյոք այդ խմբակային դեպքը վարակի բռնկում է, թե ոչ, որը կպահանջի հանրային առողջապահության կողմից բռնկման քննություն:
- ❑ Այլ անձանց հետ շփում ունեցող աշխատակիցներին պետք է անվճար տրամադրել համապատասխան դիմակ, որը ծածկում է քիթը և բերանը: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության Դիմակների էջը՝ http://publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/masks. Աշխատակիցը պետք է ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում մշտապես կրի դիմակը՝ ծածկելով քիթը և բերանը, այլ անձանց հետ շփման կամ հնարավոր շփման ժամանակ: Այն աշխատակիցները, որոնց իրենց բժիշկը կարգադրել է չկրել դիմակ, պետք է կրեն դեմքի վահան՝ ստորին հատվածում ամրացված կտորով, որպեսզի համապատասխանեն Նահանգի հրահանգներին, եթե իրենց առողջական վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են կզակը ծածկող կտորով դեմքի վահանները: Միակողմանի փականով դիմակների օգտագործումն արգելվում է:
- ❑ Բոլոր աշխատակիցները պետք է մշտապես կրեն դիմակ՝ բացառությամբ փակ դռներով անձնական սենյակներում միայնակ աշխատելիս կամ ուտելիս/խմելիս:
- ❑ Աշխատակիցներին պետք է կարգադրել լվանալ կամ, հնարավորության դեպքում, ամեն օր փոխել իրենց դիմակները:
- ❑ Դիմակների հետևողական և ճշգրիտ կրումն ապահովելու նպատակով աշխատակիցներին արգելվում է ուտել կամ խմել՝ բացառությամբ իրենց ընդմիջումների ժամերի, երբ կարող են անվտանգ կերպով հանել իրենց դիմակները և մյուսներից ֆիզիկական հեռավորություն պահպանել: Ուտելու կամ խմելու ողջ ընթացքում աշխատակիցները պետք է մյուսներից առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանեն: Նախընտրելի է ուտել կամ խմել դրսում և հնարավորության դեպքում՝ մյուսներից հեռու: Նախընտրելի է ընդմիջման սենյակների փոխարեն ուտել կամ խմել խցիկում կամ աշխատավայրում, եթե խցիկը կամ աշխատավայրը տրամադրում է ավելի մեծ հեռավորություն և նախատեսում է պատնեշներ աշխատակիցների միջև:
- ❑ Զբաղվածությունը պետք է նվազեցվի և աշխատակիցների միջև հեռավորությունը պետք է հասցվի առավելագույնի յուրաքանչյուր սենյակում կամ տարածքում, որն օգտագործվում է աշխատակիցների կողմից ճաշելու և/կամ ընդմիջումների համար: Դա կարելի է իրագործել հետևյալ կերպ՝
    - ○ Ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում տեղադրելով առավելագույն զբաղվածությունը նշող ցուցանակներ՝ անձանց միջև թույլատրվող առնվազն վեց ոտնաչափ հեռավորությանը համապատասխան, և
    - ○ Դասակարգելով ընդմիջումների կամ ճաշելու ժամերը՝ նվազեցնելու զբաղվածությունը ճաշելու կամ ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում, և

Կասեցված է, այլևս կիրառելի չէ

- Տեղադրելով սեղաններն իրարից առնվազն ութ ոտնաչափ հեռավորությամբ և նստատեղերի միջև ապահովելով առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն, հեռացնելով կամ ժապավենով նշելով նստատեղերը՝ նվազեցնելու զբաղվածությունը, հատակին անելով նշումներ՝ ապահովելու հեռավորության պահպանումը, և դասավորելով նստատեղերն այնպես, որ նվազեցվի դեմ առ դեմ շփումը: Խրախուսվում է պատնեշների կիրառումը վարակի լրացուցիչ տարածումը կանխելու նպատակով, սակայն դրանք չպետք է համարվեն զբաղվածության նվազեցմանը և ֆիզիկական հեռավորության պահպանմանը փոխարինող տարբերակներ:

- ❑ Աշխատակիցներին հանձնարարվում է պահպանել առնվազն վեց (6) ոտնաչափ հեռավորություն այցելուներից և իրար միջև հաստատության բոլոր տարածքներում: Աշխատակիցները կարող են մի ակնթարթով մոտենալ՝ ըստ անհրաժեշտության մասնակիցներին օգնելու համար, կամ այլապես անհրաժեշտ լինելու դեպքում:
- ❑ Պետքարանները և ընդհանուր օգտագործման մյուս տարածքները մաքրվում են ստորև ներկայացված հաճախականությամբ, սակայն ոչ պակաս, քան օրական մեկ անգամ, հետևյալ ժամանակացույցով՝
  - Պետքարաններ ______________________________
  - Այլ ______________________________
- ❑ Ախտահանիչները և նմանատիպ միջոցները հասանելի են աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում՝

____

- ❑ COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի ախտահանիչ միջոցը հասանելի է բոլոր աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում՝

____

- ❑ Աշխատակիցներին պետք է հիշեցնել հաճախակի լվանալ իրենց ձեռքերը կամ օգտվել ձեռքերի ախտահանիչ միջոցից:
- ❑ Սույն Արձանագրության պատճենը պետք է տրամադրվի բոլոր աշխատակիցներին:
- ❑ Ըստ հնարավորության՝ յուրաքանչյուր աշխատողի պետք է տրամադրել իր անձնական աշխատանքային գործիքը և պարգադրել խուսափել ուրիշներին հեռախոսներ, պլանշետներ, երկկողմանի ռադիոընդունիչներ, այլ աշխատանքային պարագաներ կամ գրասենյակային սարքեր տրամադրելուց:
- ❑ Պարագաների համատեղ օգտագործման անհրաժեշտության դեպքում դրանք պետք է մաքրվեն օրական առնվազն մեկ անգամ, կամ, ըստ անհրաժեշտության՝ ավելի հաճախ, մակերեսների համար նախատեսված մաքրող միջոցով օրական առնվազն մեկ անգամ, ներառյալ հետևյալները՝ համատեղ օգտագործման գրասենյակային պարագաները ինչպիսիք են՝ տպիչները, ֆաքսի ապարատները, հեռախոսները, ստեղնաշարերը, ամրակիչները, ամրակիչ հեռացնող սարքերը, նամակների բացիչները, հյուրերի ընդունելության վայրի մակերեսները, ընդհանուր աշխատանքային կայանները, աուդիո և վիդեո սարքավորումները, ռացիաները, և այլն:
- ❑ Աշխատողներին անհրաժեշտ է ժամանակ տրամադրել իրենց հերթափոխի ընթացքում մաքրման աշխատանքներ կատարելու համար: Մաքրման հանձնարարությունները պետք է նշանակել աշխատանքային ժամերին՝ որպես աշխատակիցների աշխատանքային պարտականությունների մաս: Անհրաժեշտության դեպքում փոփոխեք ժամերը՝ ըստ անհրաժեշտության ապահովելու կանոնավոր, մանրակրկիտ մաքրում: Մաքրման աճող պահանջարկի դեպքում դիմեք մաքրման աշխատանքներ իրականացնող ընկերությանը՝ որպես աջակցող երրորդ կողմի:
- ❑ Սույն փաստաթղթում նկարագրված բոլոր գործողությունները՝ բացառությամբ աշխատանքի ընդունման պայմաններին վերաբերող գործողությունների, վերաբերում են առաքման անձնակազմին և ցանկացած ընկերությունների, որոնք հաստատության տարածքում գործում են որպես երրորդ կողմ:
- ❑ Ընտրովի—Նկարագրել այլ միջոցառումներ:

____

Կասեցված է՝ այլևս արդիական չէ

B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Համայնքային Կենտրոնի յուրաքանչյուր տարածքի/սենյակի համար ցանկացած պահի սահմանափակեք տվյալ վայրում գտնվող անձանց քանակը՝ մշտապես առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանելու համար համապատասխան քանակով(բացառությամբ երիտասարդների):
  - <u>Երիտասարդների համար.</u> մասնակիցները պետք է մնան միևնույն տարածքում և հնարավորինս փոքր և հաստատուն խմբերում: Յուրաքանչյուր դասարանում պահեք միևնույն մասնակիցներին և անձնակազմի անդամներին և նույն խմբում ներգրավեք միևնույն ընտանիքի անդամներին՝ առավելագույն կիրառելի չափով: Հաստատուն խմբերի առավելագույն չափը սահմանափակվում է երիտասարդների այն քանակով, որը թույլ է տալիս խմբի բոլոր մասնակիցներին պահպանել 3 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն մյուս բոլոր երիտասարդներից՝ գործող ծրագրի տարածքում: Անձնակազմի անդամները պետք է պահպանեն 6 ոտնաչափ հեռավորություն երիտասարդ մասնակիցներից և անձնակազմի մյուս անդամներից: Այնուամենայնիվ խմբի չափը չի կարող գերազանցել առավելագույնը 30 երիտասարդները և երկու վերահսկող անձինք՝ անկախ գործող ծրագրի տարածքի չափից:
  - <u>Մեծահասակների համար.</u> փակ դասասենյակներում աշխատարկվող դասընթացները պետք է սահմանափակվեն դասասենյակի կամ լսարանի 50% զբաղվածությամբ: Զբաղվածության չափը հիմնված է շինությունների կամ հրշեջ ծառայության օրենքով սահմանված զբաղվածության վրա:
    - Որպես անվտանգության լրացուցիչ միջոցառում՝ համայնքային դասընթացի կամ զբաղմունքների կազմակերպիչները կարող են որոշել սահմանափակել դասերի հաճախումը միայն այն մասնակիցներով և ուսուցիչներով, որոնք ներկայացնում են COVID-19- ի դեմ ամբողջովին պատվաստված լինելու մասին ապացույց: Եթե պատվաստվել են՝
      - Մասնակիցներին անհրաժեշտ է հանձնարարել գրանցման վայրում հաստատել ամբողջովին պատվաստված լինելու իրենց կարգավիճակը, և
      - Մասնակիցները, որոնք հաստատում են, որ ամբողջովին պատվաստված են, նախքան դասասենյակ կամ զբաղմունքի վայր մտնելը պետք է դասարանին կամ զբաղմունքի կազմակերպիչներին ներկայացնեն անհրաժեշտ վավերացումը, որը կարող է լինել և՛ լուսանկարով նույնականացում, և՛ COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված լինելու վերաբերյալ ապացույց, օրինակ՝ անձի պատվաստման քարտը (որը ներառում է պատվաստված անձի անունը, COVID-19-ի դեմ տրամադրվող պատվաստանյութի տեսակը, վերջին դեղաչափի ներարկման ամսաթիվը) կամ տվյալ անձի պատվաստման քարտի լուսանկարը՝ որպես բավանձին փաստաթուղթ, կամ հեռախոսում կամ էլեկտրոնային սարքում պահպանված պատվաստման քարտի լուսանկարը, կամ COVID-19-ի դեմ տվյալ անձի ամբողջովին պատվաստված լինելու վերաբերյալ փաստաթուղթ առողջապահական ծառայություններ տրամադրողի կողմից (որը ներառում է պատվաստված անձի անունը և հաստատում է, որ տվյալ անձը ամբողջովին պատվաստված է COVID-19-ի դեմ):
- Բոլոր ուսուցիչները, մասնակիցները և այցելուները, որոնք մուտք են գործում տարածք, պետք է միշտ կրեն դիմակ: Սա վերաբերում է բոլոր մեծահասակներին և 2 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաներին: Այն անձինք, որոնց իրենց բժիշկը հանձնարարել է չկրել դիմակ, պետք է կրեն ստորին եզրին կտոր ամրացված դեմքի վահան, որպեսզի համապատասխանեն Նահանգի հրահանգներին, քանի դեռ իրենց առողջական վիճակը թույլ է տալիս: Միակողմանի փականներով դիմակների օգտագործումն արգելվում է: Ձեր համայնքի անվտանգությանը աջակցելու համար դիմակները պետք է հասանելի լինեն այն անձանց համար, որոնք ժամանում են առանց դիմակի:
- Առավելագույնի հասցրեք նստատեղերի, գրասեղանների կամ աշխատանքային կայանների միջև տարածությունը: Դիտարկեք ուրիշ տարբերակներով մասնակիցների միջև վեց ոտնաչափ հեռավորության ապահովումը, օրինակ՝ վեց ոտնաչափ հեռավորություն նստատեղերի միջև,

Ստացված է ալիքային տարբերակ

գծանշումներ գետնին՝ խթանելու հեռավորության պահպանումը, նստատեղերի դասակարգումն այնպես, որ նվազագույնի հասցվի դեմառդեմ շփումը և պահպանվի հեռավորությունը: Միջնապատերի կիրառումը խրախուսվում է հետագայում տարածումը կանխելու համար, սակայն դրանք չեն կարող համարվել փոխարինող տարբերակներ զբաղվածության կրճատման և ֆիզիկական հեռավորության պահպանման համար:

- ❑ Եթե Համայնքային Կենտրոնը ներառում է մեծ սենյակներ, այդ սենյակները կարելի է բաժանել ավելի փոքր տարածքների: Սենյակները բաժանելու դեպքում անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ նախազգուշական միջոցառումները՝
  - Բաժանարարների տեղադրման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հրդեհի, անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության կարգավորումները:
  - Սենյակի բաժանարարները պետք է ձգվեն հատակից մինչև առաստաղ և պատրաստված լինեն ոչ ծակոտկեն նյութից, որը հնարավոր է պարբերաբար ախտահանել:
  - Սենյակի բաժանարարները պետք է տեղադրվեն այնպես, որ առավելագույնի հասցվի օդափոխությունն ու օդի հոսքը՝ թույլ տալով առողջ ջերմաստիճանի ապահովում և աղտոտիչների հեռացում:
  - Սենյակի բաժանարարները պետք է հատակին ամրացված լինեն այնպես, որ նվազագույնի հասցվի սայթաքումների և ընկնելու վտանգը:
  - Բաժանումը կատարելուց հետո յուրաքանչյուր տարածք պետք է բավականաչափ տարածք հատկացնի ֆիզիկական հեռավորությանը (այսինքն՝ մասնակիցների միջև վեց ոտնաչափ հեռավորություն):
  - Բաժանված սենյակները պետք է նախագծված լինեն այնպես, որ մասնակիցների խմբերը կարողանան մուտք գործել և դուրս գալ՝ առանց մասնակիցների երկրորդ խմբի հետ միախառնվելու: Եթե սենյակն ունի 2 դուռ, խորհուրդ է տրվում, որ մասնակիցների յուրաքանչյուր խումբ օգտվի մեկ առանձին դռնից, որը կօգտագործվի միայն իրենց կողմից տարածք մուտք գործելու և դուրս գալու համար:
  - Պետք է հասանելի լինի ելքուղի (ելքի միջոց), ինչպես նաև բաժանված սենյակի յուրաքանչյուր կողմում գտնվող մասնակիցների համար պետք է հստակ տեսանելի լինեն ելքի նշանները: Յուրաքանչյուր տարածք պետք է ունենա մշտական և անխոչընդոտ ճանապարհ՝ տվյալ տարածքի ցանկացած կետից դեպի անվտանգության վայր: Նշաններ պետք է փակցվեն բաժանարարների վրա կամ դրանց մոտ, որտեղ պետք է նշվեն դեպի ելքեր տանող ճանապարհները: Այդ ուղիներից օգտվելու կարգը պետք է կիրառվի տարհանման պարապմունքների ժամանակ՝ արտակարգ իրավիճակների դեպքում անվտանգությունն ապահովելու նպատակով:
- ❑ Դիտարկեք փոքր խմբերի համար զբաղմունքների վերափոխման, ինչպես նաև կահույքի և դասասենյակների վերադասավորման տարբերակները բաժանումն ապահովելու նպատակով:
- ❑ Անձնակազմը պետք է մշակի հեռավորությունը առավելագույնի հասցնելու հրահանգներ և ներքին ու արտաքին տարածքներում շարժը նվազագույնի հասցնելու ուղիներ, որոնք երեխաների համար կլինեն դյուրընկալելի և երեխաների զարգացմանը համապատասխան:
- ❑ Սահմանափակեք միաժամանակ ոչ կարևոր այցելուներ, կամավորներ և այլ խմբեր ներգրավող զբաղմունքները:
- ❑ Հնարավորության դեպքում սահմանափակեք համատեղ զբաղմունքները: Եթե դա հնարավոր չէ, դասակարգեք զբաղմունքները և տարածքի պատշաճ կերպով օգտագործումը, խմբերը պահեք փոքր և հաստատուն և ախտահանեք օգտագործումների միջև:
- ❑ Սահմանափակեք խմբային և արտադպրոցական զբաղմունքներն այնպիսի գործողություններով, որոնց ժամանակ մասնակիցները և գործունեության ղեկավարները կարող են պահպանել ֆիզիկական հեռավորություն և իրականացնել ձեռքերի պատշաճ հիգիենա:
- ❑ Անհրաժեշտության դեպքում օգտագործեք այլընտրանքային տարածքներ, ներառյալ՝ բացօթյա

Ստացված է՝ այլևս վավեր չէ

տարածքի կանոնավոր օգտագործումը, եթե եղանակային պայմանները թույլ են տալիս: Օրինակ՝ դիտարկեք բացօթյա տարածքը առավելագույնի հասցնելու տարբերակները, ինչպես նաև ինքնասպասարկման ճաշարանների և այլ տարածքների օգտագործումը՝ թույլատրելու ֆիզիկական հեռավորության պահպանումը:

- ❑ Հնարավորինս նվազագույնի հասցրեք խմբակային շարժը: Դասասենյակի և տարածության օգտագործման ժամերը պետք է դասակարգվեն այնպես, որ մի քանի սենյակներից դուրս գալը չհանգեցնի մարդկային կուտակումների և ֆիզիկական հեռավորության բացակայության՝ որպես մասնակիցների միաժամանակ տարբեր սենյակներից կամ տարածքներից դուրս գալու արդյունք: Մուտքի դռները օգտագործեք մուտք գործելու, իսկ ելքի դռները դուրս գալու համար՝ նվազագույնի հասցնելու կուտակումները:
  - ❑ Շնչառական կաթիլներ առաջացնող զբաղմունքների համար, օրինակ՝ ձայնի կարդությունը կամ երգեցողությունը, ավելացրեք անձանց միջև հեռավորությունը մինչև 12 ոտնաչափի և փորձեք այդ զբաղմունքներն անցկացնել բացօթյա տարածքում: Որպես հիշեցում՝ մարզական (աթլետիկայի) դասերը կամ զբաղմունքները՝ ի հավելումն սույն փաստաթղթի՝ պետք է հետևեն նաև ԼԱ Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության Երիտասարդական և Մեծահասակների Ժամանցային Մարզական Միջոցառումների Ուղեցույցին:

C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ HVAC համակարգը պետք է գտնվի լավ, գործող վիճակում, օդափոխությունը պետք է հնարավորինս ավելացվի: Արդյունավետ օդափոխությունը փոքր աերոզոլների փոխանցումը վերահսկելու ամենակարևոր միջոցներից մեկն է: Դիտարկեք բարձր արդյունավետությամբ օդը մաքրող շարժական սարքերի տեղադրման տարբերակը՝ առավելագույն բարձր արդյունավետության հասցնելու շենքի օդի զտիչները, և կատարեք այլ փոփոխություններ՝ ավելացնելու արտաքին օդի և օդափոխության մակարդակը սենյակներում և մյուս վայրերում: Մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Կալիֆորնիայի Հանրային Առողջապահության Վարչության Փակ Տարածքներում Օդափոխության, Զտման և Օդի Որակի Ապահովման Ժամանակավոր Ուղեցույցը:
  - Խնդրում ենք նկատի ունենալ. Օդափոխությունը և փակ տարածքներում օդի որակի բարելավման մյուս տարբերակները հանդիսանում են հավելյալ, այլ ոչ փոխարինող միջոց պարտադիր պաշտպանիչ միջոցառումներին՝ ներառյալ դիմակ կրելը (բացառությամբ բարձր վտանգավորություն ունեցող որոշ միջավայրերում, որոնք պահանջում են պատշաճ շնչառական պաշտպանություն), մարդկանց միջև առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանելը, հաճախ ձեռքերը լվանալը և այնպիսի գործողությունների սահմանափակումը, որոնք միավորում են տարբեր ընտանիքների անդամ հանդիսացող անձանց:
- ❑ Մուտքի ստուգումները պետք է իրականացվեն նախքան աշակերտների կամ այցելուների կողմից հաստատության դասասենյակ մուտք գործելը: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության և ջերմության կամ դողի ստուգում, ինչպես նաև հարցում այն մասին, թե արդյոք անձը տվյալ պահին գտնվում է մեկուսացման կամ կարանտին պահպանելու հրահանգների ներքո: (Տե՛ս Շրջանի Մուտքի Ստուգումների ուղեցույցը): Նշված ստուգումները կարող են կատարվել անձնապես կամ այլընտրանքային տարբերակներով, ինչպես օրինակ՝ առցանց ստուգման հարցաթերթերի կամ հաստատության մուտքի մոտ փակցված ցուցանակի միջոցով, որը կնշի, թե որ ախտանիշերն ունենալու դեպքում այցելուները չեն կարող մուտք գործել տարածք:
  - Ստուգման Բացասական Արդյունք (Մուտքը թույլատրվում է). Եթե անձը չունի ախտանիշ(ներ) և վերջին 10 օրերի ընթացքում շփում չի ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ, նա կարող է տվյալ օրը մուտք գործել:
  - Ստուգման Դրական Արդյունք (Մուտքը չի թույլատրվում).
    - Եթե վերջին 10 օրերի ընթացքում անձը շփում է ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ կամ տվյալ պահին գտնվում է կարանտին պահպանելու հրահանգների ներքո, նա չի կարող մուտք գործել և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ տանը կարանտին

Վարկածը է այլևս կիրառելի չէ

պահպանելու: Տրամադրեք նրան կարանտին պահպանելու հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ ph.lacounty.gov/covidquarantine:

- Եթե անձի մոտ դրսևորվում է վերոնշյալ ախտանիշներից որևէ մեկը, կամ նա տվյալ պահին գտնվում է մեկուսացման հրահանգների ներքո, նա չի կարող մուտք գործել և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ մեկուսանալու տանը: Տրամադրեք նրան մեկուսացման հրահանգները, որոնք կարելի է գտնել՝ ph.lacounty.gov/covidisolation:

- ❑ Անձնակազմի բոլոր անդամները, մասնակիցները և այցելուները, որոնք մուտք են գործում տարածք, պետք է կրեն դիմակ: Սա վերաբերում է բոլոր մեծահասակներին և 2 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաներին: Այն անձինք, որոնց իրենց բժիշկը հանձնարարել է չկրել դիմակ, պետք է կրեն ստորին եզրին կտոր ամրացված դեմքի վահան, որպեսզի համապատասխանեն Նահանգի հրահանգներին, եթե իրենց առողջական վիճակը թույլ է տալիս: Միակողմանի փականներով դիմակների օգտագործումն արգելվում է: Ձեր համայնքի անվտանգությանը աջակցելու համար դիմակները պետք է հասանելի լինեն այն անձանց համար, որոնք ժամանում են առանց դիմակի:
- ❑ Ապահովեք, որպեսզի ամբողջ անձնակազմը, ուսանողները և ընտանիքները տեղեկացված լինեն բարելավված սանիտարական պայմաններին, ֆիզիկական հեռավորության ուղեցույցներին և դրանց կարևորությանը, դիմակների պատշաճ կիրառության, հեռացման և լվացման կարգին, ստուգման կարգին և COVID-19-ի բացառման հատուկ չափանիշներին:
- ❑ Նշանակեք անձնակազմի անդամներից մեկին (օր.՝ ծրագրի ղեկավարին կամ առողջապահական ծառայություններ մատուցողին), որը պատասխանատու կլինի COVID-19-ի հետ կապված մտահոգություններին արձագանքելու համար և կծառայի որպես Հանրային Առողջապահության Վարչության հետ կապ ապահովող անձ: Ծրագրի ամբողջ անձնակազմը, մասնակիցները և ընտանիքները պետք է ճանաչեն այդ անձին և իմանան, ինչպես կապ հաստատել նրա հետ: Այդ անձը պետք է լինի վերապատրաստված՝ համակարգելու բոլոր հնարավոր վարակման դեպքերը և հետևելու նրանց, որպեսզի տեղային առողջապահական պատասխանատուներին տեղեկացնի հաստատության տարածքում COVID-19-ով վարակման դեպքերի մասին՝ դրանց մասին տեղեկանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:
- ❑ Ապահովեք բավարար պարագաների առկայություն՝ աջակցելու առողջ հիգիենայի վարքագծին, ներառյալ՝ օճառ, անձեռոցիկներ, անհրաժեշտ աղբարկղեր և առնվազն 60 տոկոս էթիլային սպիրտ պարունակող ձեռքերի ախտահանիչ միջոցներ անձնակազմի և մասնակիցների համար, ովքեր կարող են ապահով կերպով օգտագործել ձեռքի մաքրող միջոց:
- ❑ Դիտարկեք այնպիսի օրվա գործերը, որոնք անձնակազմին և մասնակիցներին հնարավորություն կտան պարբերաբար լվանալ իրենց ձեռքերը՝ դասակարգված ընդմիջումներով: Ուսանողները և անձնակազմի անդամները պետք է 20 վայրկյան լվանան իրենց ձեռքերը օճառով՝ տրորելով այն, իսկ ձեռքերը լավ չորացնելու համար օգտագործեն թղթե սրբիչներ (կամ մեկանգամյա օգտագործման կտորե սրբիչներ):
- ❑ Մասնակիցները և անձնակազմի անդամները պետք է օգտագործեն ձեռքերի մաքրող միջոց, երբ ձեռքերը լվանալն անհարավոր չէ: Մաքրող միջոցը պետք է քսել-տրորել ձեռքերին, մինչև ամբողջովին ներծծվելը: Ծանոթություն. Ձեռքերը հաճախակի լվանալը ավելի արդյունավետ է, քան ձեռքի մաքրող միջոցներ օգտագործելը՝ հատկապես, երբ ձեռքերը տեսանելիորեն կեղտոտ են:
- ❑ Ինը տարեկանից փոքր երեխաները պետք է օգտագործեն ձեռքերի մաքրող միջոցը մեծահասակների վերահսկողությամբ: Մաքրման միջոցը կուլ տալու դեպքում զանգահարեք Թունավորումների Վերահսկողության Կենտրոն՝ 1-800-222-1222 հեռախոսահամարով: Նախընտրելի են Էթիլային սպիրտի հիմքով ձեռքերի մաքրող միջոցները, և դրանք պետք է օգտագործվեն այն դեպքում, եթե կա երեխաների կողմից առանց վերահսկողության այդ միջոցներն օգտագործելու հնարավորություն: Իզոպրոպիլ պարունակող ձեռքերի մաքրող միջոցներն ավելի թունավոր են և կարող են ներծծվել մաշկի միջոցով:
- ❑ Դիտարկեք ամբողջ տարածքում ձեռքերի լվացման շարժական կայանների տեղադրումը՝ հնարավորինս նվազագույնի հասցնելու պետքարաններում շարժը և կուտակումները:
- ❑ Խրախուսեք մասնակիցներին իրենց հետ բերել նախապես լցված բազմակի օգտագործման կամ գնված ջրով լի շշեր: Ջրի շատրվանները հասանելի են միայն ջրի շշերը լցնելու համար:

Կասեցված է այլևս գործում չէ

- Հաճախակի հպման մակերեսները, ինչպիսիք են՝ բռնակները, անջատիչները, լվացարանի բռնակները, պետքարանի մակերեսները, սեղանները և փոխադրամիջոցներում մակերեսները, պետք է մաքրվեն օրական առնվազն մեկ անգամ կամ օգտագործումների հետևանքով լրացուցիչ անհրաժեշտության դեպքում՝ ավելի հաճախ:
- Սահմանափակեք առարկաների և սարքավորումների համատեղ օգտագործումը, ինչպիսիք են՝ գեղարվեստական պարագաները (ներառյալ՝ շինարարական աղյուսների/մասերի կառուցումը), խաղերը (օր.՝ շախմատ, շաշկի և այլն), ի թիվս այլոց՝ համակարգչային սարքերը, և մաքրեք դրանք օգտագործելուց առաջ և հետո: Մասնակիցներին պետք է հանձնարարել լվանալ ձեռքերը կամ օգտագործել ձեռքերի ախտահանիչ միջոց ընդհանուր օգտագործման առարկաներով/սարքերով խաղերին մասնակցելուց անմիջապես առաջ և հետո:
- Մաքրող միջոցներ ընտրելիս օգտագործեք COVID-19-ի դեմ օգտագործման համար նախատեսված այն միջոցները, որոնք հաստատվել են Շրջակա Միջավայրի Պահպանության Գործակալության (EPA) կողմից և ներառված են «N» ցուցակում և հետևեք արտադրողի հրահանգներին: Այդ արտադրանքները պարունակում են բաղադրիչներ, որոնք ավելի անվտանգ են ասթմայով հիվանդ անձանց համար:
- Օգտագործեք ախտահանիչներ, որոնք պիտակավորված են՝ որպես արդյունավետ միջոցներ վիրուսային հարուցիչների դեմ՝ հետևելով պիտակի ցուցումներին, նոսրացման մակարդակի և կոնտակտային ժամանակամիջոցի համար: Աշխատակիցներին վերապատրաստեք քիմիական նյութերի վտանգների, արտադրողի հրահանգների և Cal/OSHA-ի պահանջների անվտանգ կիրառման վերաբերյալ:
- Խնամք իրականացնող անձնակազմի անդամները, որոնք պատասխանատու են տարածքի մաքրման և ախտահանման համար, պետք է ապահովված լինեն պատշաճ պաշտպանիչ միջոցներով, ներառյալ՝ ձեռնոցները, աչքերի պաշտպանությունը, շնչառական պաշտպանությունը և այլ համապատասխան պաշտպանիչ սարքերը՝ համաձայն արտադրանքի հրահանգների: Բոլոր արտադրանքները պետք է հեռու գտնվեն երեխաներից և պահվեն սահմանափակ հասանելիություն ունեցող տարածքում:
- Մաքրման աշխատանք իրականացնելիս օդափոխեք տարածքը՝ նախքան մասնակիցների ժամանումը. մասնակիցների բացակայության ժամանակ ծրագրեք կատարել մանրակրկիտ մաքրում: Եթե օգտագործում եք օդորակիչ, միացրեք այն հատկությունը, որը ապահովում է մաքուր օդի հոսք: Փոխարինեք և ստուգեք օդի զտիչները և զտման համակարգերը՝ ապահովելու օդի բարենպաստ որակը:
- Եթե պատուհանները բացելը սպառնում է անվտանգությանը կամ առողջությանը, ապա դիտարկեք օդի հոսքի բարելավման այլընտրանքային տարբերակներ, ինչպիսիք են՝ HVAC համակարգերի համար օդի կենտրոնական զտումը առավելագույնի հասցնելը (զտիչի աշխատանքի գնահատումը պետք է կազմի առնվազն MERV 13):
- Ձեռնարկեք քայլեր՝ ապահովելու, որ ջրային բոլոր համակարգերը (օրինակ՝ խմելու շատրվաններ, դեկորատիվ շատրվաններ) անվտանգ օգտագործվեն հաստատության երկարատև փակումից հետո՝ նվազագույնի հասցնելով վարակների վտանգը, ինպես օրինակ՝ Լեգեոներների հիվանդությունը:

ՀԱՏՈՒԿ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

- Երաժշտության դասեր.
  - Հնարավորության դեպքում երաժշտության դասերն անկացրեք բացօթյա տարածքում:
  - Ցանկացած գործողություն, որը մասնակիցներից պահանջում է հանել իրենց դիմակները (օր.՝ փողային գործիքներ նվագելը) կարող է կատարվել խմբով միայն այն դեպքում, եթե աշակերտները գտնվում են իրարից առնվազն 12 ոտնաչափ հեռավորության վրա և, եթե գործողությունն անցկացվում է բացօթյա տարածքում: Փողային գործիքներ նվագողները, ըստ անհրաժեշտության, պետք է օգտագործեն լրացուցիչ ձևափոխություններ, ինչպիսիք են՝ գործիքից արտանետվող աերոզոլների ելքն արգելափակող սարքերը: Սակայն, նրանք կարող են միայնակ անցկացնել փորձերը փակ տարածքում՝ ստուդիայում կամ փորձերի սենյակում:
  - Շնչառական կաթիլների արտանետում առաջացնող գործողությունների դեպքում, ինչպես օրինակ՝ երգեցողությունը, ավելացրեք անձանց միջև հեռավորությունը մինչև 12 ոտնաչափի և

Կաղապարն է՝ այլևս պատճառ չէ

փորձեք այդ գործողություններն անել բացօթյա տարածքում:
  - Սահմանափակեք ցանկացած գործիքի, գործիքի մասերի, երաժշտական թղթերի կամ այլ իրերի փոխանակումը (կամ համատեղ օգտագործումը):
  - Հնարավորության դեպքում օգտագործեք մեկանգամյա կլանող բարձիկներ կամ այլ պարկեր արտանետված կաթիլները կամ ջրի կաթիլները բռնելու համար, օգտագործելուց հետո դրանք դեն նետեք և պատշաճ կերպով մաքրեք գործիքը:
  - Փողային գործիքների բացման համար դիտարկեք <<փափուկ ծածկերի>>, իսկ փայտե փողային գործիքների դեպքում՝ ձեռքով բացվող հատուկ պայուսակների օգտագործումը՝ նվազագույնի հասցնելու կաթիլների և աերոզոլների առաջացումը:

- Թատրոնի դասեր.
  - Հնարավորության դեպքում թատրոնի դասերն անկացրեք բացօթյա տարածքում:
  - Թատրոնի դասերի մասնակիցներն ու ուսուցիչները պետք է մշտապես կրեն դիմակներ և ապահովեն, որ բոլոր մասնակիցները մշտապես պահպանեն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն կամ 8 ոտնաչափ հեռավորություն, եթե մասնակիցները ելույթ են ունենում (օրինակ՝ թատրոնի արիեստանոցում գտնվող անձինք):
  - Հնարավորության դեպքում սահմանափակեք թատրոնի պարագաների, հագուստի և կեղծամների համատեղ օգտագործումը: Եթե անհրաժեշտ է իրերը համատեղ օգտագործել, ապա ընտրեք այնպիսի պարագաներ, հագուստ և այլ նյութեր, որոնք կարող են ավելի հեշտությամբ ախտահանվել: Բոլոր պարագաները պետք է ախտահանվեն նկարահանման հրապարակում առաջին անգամ օգտագործվելուց առաջ և տարբեր դերասանների կողմից օգտագործվելուց առաջ և հետո: Համատեղ օգտագործված բոլոր հագուստները պետք է մաքրվեն յուրաքանչյուր օգտագործումից հետո: Բոլոր կեղծամները կամ այլ ընդհանուր օգտագործման պրոթեզանման իրերը պետք է ախտահանվեն յուրաքանչյուր օգտագործումից հետո:
  - Մաքրեք հանդերձարանները, կանաչ սենյակները և արտադրական տարածքները՝ EPA-ի N Ցուցակի՝ Ախտահանիչներ COVID-19-ի համար ախտահանող միջոցների կիրառմամբ.
  - Դիտարկեք ներկայացումները բացօթյա կամ առցանց, այլ ոչ փակ տարածքում անցկացնելու տարբերակը:

- Մարզական/սպորտային դասեր.
  - Ի հավելումն սույն կանոնակարգի՝ մարզական (աթլետիկայի) դասերը կամ զբաղմունքները պետք է հետևեն նաև ԼԱ Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության Երիտասարդական և Մեծահասակների Ժամանցային Մարզական Մրցաշարերի Արձանագրությանը:
  - Շնչառական կաթիլներ առաջացնող զբաղմունքների համար, օրինակ՝ ծանր վարժությունը, ավելացրեք անձանց միջև հեռավորությունը մինչև 8 ոտնաչափի:
  - Մասնակիցները և ուսուցիչները պետք է դասի ժամանակ մշտապես կրեն դիմակներ: Դիմակները կարող են հեռացվել մի պահ ջուր խմելու համար. ջրի ընդմիջումների ժամանակ մասնակիցներին պետք է հիշեցնել, որ մշտապես պահպանեն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն: Մասնակիցներին պետք է հիշեցնել, որպեսզի սահմանափակեն իրենց ֆիզիկական վարժությունները, որ կարողանան դրանք կատարել դիմակով, և հաճախակի դադարներ վերցնեն վարժություններից կամ դադարեցնեն վարժությունը, եթե սկսեն զգալ շնչառական որևէ դժվարություն: Դիմակները պետք է փոխվեն թրջվելու, անձի դեմքին կպչելու կամ շնչելուն խոչընդոտելու դեպքում:

- Համայնքային հանդիպումներ.
  - Փակ տարածքներում անցկացվող համայնքային հանդիպումները պետք է սահմանափակվեն սենյակի զբաղվածության 50%-ով՝ հիմնվելով շենքերի կամ հրշեջ ծառայության կիրառելի օրենքի վրա, կամ 50 անձանցով՝ որը որ ավելի քիչ է: Եթե հանդիպումն անցկացվում է բացօթյա տարածքում, ապա այն պետք է սահմանափակվի 100 կամ ավելի քիչ անձանցով, և բոլոր

Կասեցված է՝ այլևս ուժի մեջ չէ

ներկաները պետք է պահպանեն ֆիզիկական հեռավորություն:

- ○ Համայնքային բոլոր հանդիպումների տարածքները պետք է ձևափոխվեն այնպես, որ բոլոր ներկաները հնարավորություն ունենան պահպանել առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն հանդիպումների ընթացքում:
- ○ Հանդիպման տևողությունը պետք է հնարավորինս սահմանափակվի:
- ○ Համայնքային հանդիպումներ հյուրընկալող կազմակերպությունները պետք է շարունակեն առաջարկել հեռակա կարգով դիտման տարբերակը նրանց համար, ովքեր նախընտրում են մասնակցել հանդիպումներին առցանց տարբերակով:

- ❑ Մասնավոր Միջոցառումներ (Հանդիպումներ / Ընդունելություններ / Համաժողովներ (Կոնֆերանսներ)):
  - ○ Մասնավոր Միջոցառումներ հյուրընկալելու և անցկացնելու համար կարող են օգտագործվել Համայնքի Կենտրոնները: Մասնավոր միջոցառման կազմակերպիչը կամ հյուրընկալը պետք է հետևի Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության Մասնավոր Միջոցառումների Արձանագրությանը, որը կցված է Առողջապահության Պատասխանատուի Հրամանի Հավելված BB-ին:

D. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Անհրաժեշտ է ունենալ կապի համակարգեր, որոնք անձնակազմին, մասնակիցներին և ծնողներին/ խնամակալներին թույլ կտան ինքնուրույն հաղորդել ախտանիշների մասին և ստանալ արագ ծանուցումներ վարակման դեպքերի և փակումների վերաբերյալ՝ միաժամանակ պահպանելով գաղտնիություն:

- ❑ Սույն արձանագրության պատճենը, կամ, եթե կիրառելի է, Լոս Անջելեսի Շրջանի COVID-19-ի Անվտանգության Համապատասխանության տպագիր Վկայականը պահպանվում է հովանավորող կազմակերպության կողմից (ոչ առևտրային կազմակերպություն, դպրոց, համայնքային խումբ, եթե կիրառելի է): Լրացուցիչ տեղեկությունների կամ COVID-19-ի Անվտանգության Համապատասխանության ինքնուրույն վավերացման ծրագիրը լրացնելու համար այցելեք՝ http://publichealth.lacounty.gov/eh/covid19cert.htm: Սպորտային թիմերը պետք է տեղում պահեն Երիտասարդական և Մեծահասակների Ժամանցային Մարզական Մրցաշարերի Արձանագրության պատճենը՝ ըստ պահանջի վերանայման համար:

- ❑ Հաստատության ամբողջ տարածքում պետք է փակցված լինեն ցուցանակներ, որոնք կհիշեցնեն անձնակազմի անդամներին և մասնակիցներին ֆիզիկական հեռավորություն պահպանելու և դիմակներ կրելու մասին: Լրացուցիչ ռեսուրսների և բիզնեսների կողմից օգտագործվող ցուցանակների օրինակների համար տե՛ս Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության COVID-19-ի Ուղեցույցի էջը:

- ❑ Անհրաժեշտ է փակցնել ցուցանակներ, որոնք կուղղորդեն այցելուներին մնալ տանը, եթե հիվանդ են COVID-19-ին համահունչ ախտանիշներով:

- ❑ Առցանց կետերը (վեբ կայք, սոցիալական ցանց և այլն) պետք է տրամադրեն հստակ տեղեկատվություն ֆիզիկական հեռավորություն պահպանելու, դիմակներ կրելու և COVID-19-ին առնչվող հարցերի/ խնդիրների վերաբերյալ:

E. ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՉԱՌ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Անհրաժեշտ է առաջնահերթություն տալ համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող ծառայություններին:

- ❑ Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ՝ ապահովելու ծառայությունների մատչելիություն համայնքի

այն անդամների համար, որոնք ունեն շարժունակության սահմանափակումներ և/կամ հանրային տարածքներում գտնվում են բարձր վտանգի ներքո:

Վերևում չներառված ցանկացած լրացուցիչ միջոցառում պետք է նշվի առանձին էջերի վրա, որոնք բիզնես-հաստատությունը պետք է կցի սույն փաստաթղթին:

Սույն Արձանագրության վերաբերյալ հարցերի կամ մեկնաբանությունների դեպքում կարող եք կապ հաստատել հետևյալ անձի հետ՝

Բիզնեսի Կոնտակտային Անձի Անունը՝ _____

Հեռախոսահամարը՝ _____

Վերջին Վերանայման Ամսաթիվը՝ _____

Կասեցված է՝ այլևս կիրառելի չէ